ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՒՐԱՐՏՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մ.թ.ա. 13-րդ դարից սկսած ասսուրական սեպագիր աղբյուրները վկայում են Ասորեստանին հյուսիսից սահմանակից Ուրուատրի կամ Ուրատրու անունով մի երկրի մասին: Այն գտնվել է արևմտյան և արևելյան Տիգրիսների միախառնման ավազանում: Նրան սահմանակից են եղել արևելքից Կումանի, հյուսիսից Խաբխի և արևմուտքից Կաղմուխի խուրիական գավառները:

Մ.թ.ա. 890թ. հետո Ուրուատրին սեպագիր արձանագրություններում այլևս չի հիշատակվում: Ըստ այդ վավերագրերի նրա տարածքը զբաղեցնում են հիշյալ վարչաքաղաքական միավորները:

Մ.թ.ա. 859թ. սկսած ասսուրական գրավոր աղբյուրներում հանդիպում են վկայություններ Ուրարտու անունով մի պետական կազմավորման մասին՝ Վանա լճի արևելյան ավազանում:

Ինչպես մեր մեկ այլ աշխատության մեջ ենք ցույց տվել, նկատի ունենալով արձանագրությունների նշված փաստերը և այն, որ Ուրուատրին կամ Ուրատրուն Ուրարտու անվան նախաձևերն են, պետք է եզրակացնել. Ուրուատրի երկրի ցեղերը, գաղթելով Վանա լճի ավազան, ստեղծել են Ուրարտու պետությունը: Այդ արտագաղթը տեղի է ունեցել Ուրուատրիի վրա Ասորեստանի հաճախակի հարձակումների հետևանքով[1]:

Այդ ժամանակ, ինչպես վկայում են վաղ միջնադարի հայ պատմիչները, ողջ լեռնաշխարհն ընդգրկվում էր Հայկական թագավորության սահմանների մեջ: Արամը, մ.թ.ա. 890թ. դառնալով պետության տիրակալ, Միդիայից նվաճեց նրա հյուսիս-արևմտյան շրջանները, կռվելով Ասորեստանի դեմ՝ գրավեց նաև վերին Տիգրիսի ավազանի խուրիական երկրները և ապա՝ Կապադովկիան՝ Փոքր Ասիայում: Այդ ժամանակի ասսուրական սեպագիր աղբյուրները ողջ լեռնաշխարհը հիշատակում են «Նաիրի երկիր» անունով, որով հաստատվում է Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, թե Արամի օրոք Հայկական լեռնաշխարհը գտնվում էր Հայկական պետության կազմի մեջ[2]:

Ավելին, հայ պատմիչի վկայությամբ Արամի՝ դեպի Ասորեստան կատարած արշավանքի ժամանակ ասսուրական թագավորների հարկ ու տուրքի պատճառով Կորդուքն անապատ էր դարձել[3]:

Այդ երկիրը, որն ըստ պատմահոր՝ կոչվում էր նաև Արարադ, զբաղեցնում էր նույն Ուբուատրիի կամ Ուրարտուի տարածքները: Այս բոլորը հաստատվում են ասսուրական սեպագիր աղբյուրներով, որոնցում մ.թ.ա. 890թ. սկսած Ուրատրուն այլևս չի հիշատակվում:

Հարց է առաջանում: Հայոց Արամ արքան ունե՞ր 90.000-ոց բանակ, ինչպես Մովսես Խորենացին է վկայում, որն այդ ժամանակի համար բավական պատկառելի ուժ էր: Այդ ինչպե՞ս եղավ, որ Հայկական թագավորության ոչ մեծ հատվածում բնակություն հաստատած գաղթականները՝ ուրարտացիները, կարողացան այնքան հզորանալ, որ պետություն ստեղծեցին ոչ միայն իրենց զբաղեցրած տարածքում, այլև աստիճանաբար տիրացան Արածանիի և Ճորոխի ավազանների հայկական գավառներին ու նահանգներին: Իսկ մ.թ.ա.782թ. Ուրարտուի թագավոր Արգիշտի I-ը արդեն իր տիրապետության տակ առավ արևելյան Հայաստանը՝ Արմավիր մայրաքաղաքով և վերացրեց հայոց պետականությունը:

Ուրարտուի ստեղծման և հզորացման պատճառները բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել, թե լեռնաշխարհում ուրարտական բնակչությունն ինչքան է հղել, և որքան զորք է կարողացել դուրս բերել, բանակն ինչ սկզբունքներով էր կառուցված:

Ուրարտացիների քանակի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ ենք գտնում Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) տարեգրության հետևյալ հատվածում՝ փորագրված Վանի ժայռերից մեկի վրա:

(1) «Խալդյան հզորությամբ Սարդուրին՝ Արգիշտիի որդին, ասում է. (2) երբ (աստված) Խալդին ինձ նվիրեց թագավորություն (և) (ես) բարձրացա հայրական թագավորական տեղը, (3) ահա ինչպիսի ավելորդ(՞) ընծա այս թագավորության համար (ես) ոչնչացրի. 92 մարտակառք, (4) 3.604 ձի, 352.011 զինվոր՝ և հեծյալ, (5) և հետևակ: Այն ընծան բանակի համար(՞) (ես) ոչնչացրեցի: (6) Ինչ ավելորդ(՞) էր, (ես) դեն նետեցի՝ 121 մարդ, 10.408 ձի, (7) 132 ջորի, 12.321 կով, 9.036 եզ, (8) ընդամենը՝ 21.357 (գլուխ) խոշոր եղջերավոր անասուն, 35.467 (գլուխ) մանր եղջերավոր անասուն, (9) 2.117 մարտական զենք, 1.332 աղեղ, 47.970 նետ, (10) 1.022.133 kapi գարի, 111 aqarqi գինի, 86 aqarqi 7 terusi mankali յուղ, (11) 7.079 մին պղինձ, 336 ստրուկ, ուրուրդանի մարդու համար(՞) ես ոչնչացրեցի»[4]:

Ինչպես գտնում էր Ի. Դյակոնովը, Սարդուրի II-ը, ըստ այս տեքստի, հարկեր է վերցրել, ինչը պայմանավորված էր թագավորական տնտեսության հզորացումով[5]: Դրան կարելի է ավելացնել այն, որ նրա օրոք Ուրարտուն նվաճել էր համարյա ողջ լեռնաշխարհը և հարակից ո-

յոշ տարածքներ ու բավական մեծ քանակությամբ հարկեր էր ստանում այդ երկրներից: Դրա համար էլ տեքստերում նշված հարկերը, որոնք իրենց չափերով աննշան էին (դա նկատել է նաև Ի, Դյակոնովը), թագավորն ավելորդ է համարել և չեղյալ հայտարարել:

Ի.Մ. Դյակոնովը, հետևելով Ի.Ի. Մեշչանինովին, գրում է, որ տեքստի վերջում նշված ururdani տերմինը կապ ունի Ուրարտու անվան հետ և նշանակում է «ուրարտացի»[6]: Եվ, իրոք, այդ բառի -ni մասնիկը նույնանում է ուրարտերենի ածականակերտ -ni ածանցի, կամ ավելի շուտ, կարծում ենք, սեռականի նույնահունչ ցուցիչի հետ, քանի որ այդ հոլովի իմաստը տեքստում առկա է: Այդ պարագայում ururda բառը Urartu անունից այնքան էլ չի հեռանում: Տեքստի վերջում նշված է, որ այդ հարկերը թագավորը վերացրել է ուրուբդանի՝ ուրարտացի մարդու համար: Ուրեմն այդ տնտեսական ռեֆորմը վերաբերել է միայն ազգությամբ ուրարտ բնակչությանը: Տրամաբանական էլ չէր լինի, որ Ուրարտուի թագավորը նվաճված երկրների հարկերը չեղյալ դարձներ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ այդ հարկերը Սարդուրի II-ի ժամանակ արդեն վերապրուկ էին: Ուստի կարելի է մտածել, թե դրանք սահմանվել են դեռևս մ.թ.ա. 859թ., երբ սուրբ Արամե ուրարտացին այդ թագավորությունն ստեղծեց:

Ի.Մ. Դյակոնովը խիստ կասկածելի է համարում տեքստում նշված Ուրարտուի թագավորական բանակի զինվորների թվաքանակը՝ 352.011 ռազմիկ, որն, իրոք, խիստ մեծացրած է՛:

Տեքստում գրված է, որ այդ ընծան (խոսքը վերաբերում է 92 մարտակառքերին և 3.604 ձիերին) նրա բանակի համար է չեղյալ հայտարարել: Զինվորների թվաքանակին վերաբերող հատվածը կարծում ենք, պետք է ընակել որպես միջանկյալ նախադասություն, ավելացնել զեղչված նրա ստորոգյալը և թարգմանել մոտավորապես հետևյալ ձևով. «352.011 զինվոր (կա)՝ և հեծյալ, և հետևակ»: Այսինքն՝ պարզապես նշված է զինվորների քանակը և ոչ՝ դրանց վերացնելու մասին:

Տեքստի շարունակության մեջ գրված է, որ Սարդուրին վերացրեց նաև հետևյալ հարկերը՝ 121 մարդ, 10.404 ձի: Քանի որ տեքստի սկզբում 3.604 ձիերի հարկը բանակին է վերաբերում, ուրեմն խոսքը գնում է հեծկան նժույգների մասին: Բնականաբար, տվյալ 10.404 ձիերը լծու են եղել:

Այնուհետև թագավորը չեղյալ է հայտարարել հետևյալ հարկերը՝ 132 ջորի, 12.321 կով, 9.066 եզ, 35.467 գլուխ մանր եղջեյավոր անասուն, 2.114 մարտական զենք (ըստ երևույթին՝ տեգ և սուր), 1.332 աղեղ, 47.970 նետ, 1.022.133 kapi գարի:

Ինչպես պարզել է Ն.Վ. Հարությունյանը, չափի միավոր kapi-ն - շումերերեն BANES-ն է: Ըստ Ռ. Լաբայի այն GUR-ի 3/30-ն է: Իսկ վերջինս 250 լիտր է[9]: Ուրեմն kapi-ն 25լ. է: Հետևաբար գարու հարկի չափը

մոտ 25.000 տոննա է: Սրանցից բացի ուրարտական բնակչությունը տարեկան պետք է տար 27.750լ. գինի, 17.805լ. ինչ-որ տեսակի յուղ և 10.615կգ. պղինձ:

Ինչպես նշում են մասնագետները, թվարկված հարկերի քանակը շատ քիչ է: Ըստ մեր հաշվարկների, այն կարելի է ստանալ մոտ 100.000 բնակչությունից: Դա հաստատվում է նաև այն տվյալով, որ Ուրուատրին, որը նախկինում բնակեցված է եղել ուրարտացիներով, Սալմանասար I-ի վավերագրերից մեկի հաղորդման համաձայն ունեցել է 8 գավառ և 51 բնակավայր[10]:

Այնուամենայնիվ, Ուրարտուն պետք է ունենար մեծաքիվ բանակ, որի օգնությամբ նրա տիրակալները կարողացել են նվաճել ողջ Հայկական լեռնաշխարհը և հարակից այլ երկրներ ու դիմակայել Ասորեստանի նման հզոր թագավորության ձեռնարկած արշավանքներին:

Դա պարզելու համար դիմենք այլ փաստերի: Որարտերենի šurḫani տերմինը, որը վերաբերում է զինվորների ինչ-որ տեսակի, Գ.Ա. Ղափանցյանը կապում է հայ. սխուր՝ «վճար» արմատի հետ և ենթադրում, թե դա նշանակում է «վարձկան(?)»[11]:

Ուրարտական թագավորները, ինչպես հաճախ նշված են նրանց սեպագիր արձանագրություններում, տարվա արշավանքներն սկսելուց առաջ են հավաքագրել զինվորներ: Ուրեմն նրանք ողջ տարին կայուն բանակ չեն պահել՝ բացի բերդերի կայազորներից: Այդ ռազմիկներին նրանք մի քանի ամիս կերակրել ու զինել են, որոնց հիմնական վարձատրությունը եղել է ռազմավարի տեսքով: Օրինակ՝ Սարդուրի II-ը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանները կատարած իր մի արշավանքի կապակցությամբ գրել է տվել, որ իր ավարից բացի զինվորներին բաժանել է գերեվարված տղամարդկանց և կանանց[12]:

Կամ նույն արքան, Իրանի հարավ-արևմտյան մասերում նվաճելով Բաբիլոնի և Բուլտուատա երկրները, ձեռք է բերել մեծ ավար: Իսկ ինչքան անասուն զինվորներն էին բռնագրավել, նրանք առանձին էին քշում ու տանում[13]:

šurḫani բառի մեջ կարելի է տեսնել ուրարտ. šur- արմատը, որն առկա է նույն լեզվի šurili-ի («աշխարհ», «երկիր») մեջ -ili ածանցի հետ: Վերջինս հոգնակի թվում դառնում է šuraue «երկրներ»:

Քննարկվող տերմինի -ḫani բաղադրիչը, կարծում ենք, Խուրի երկրի մեկ այլ՝ Ḫanigalbat անվան առաջին բաղադրիչն է: Ֆ. Կոռնելիուսը գտնում է, որ նշված տեղանվան -gal- վանկը շումերերենի GAL «մեծ» բառն է, որը փոխարինում է ասուրերեն rabû «մեծ» արմատին[14]: Ավելացնենք նաև, որ rabû բառը սասուր. լեզվում հանդիպում է նաև rabâti հավաքական ձևով՝ նույն նշանակությամբ: Վերջինիս երկրորդ բաղադրիչը առկա է Ḫanigalbat տեղանվան մեջ:

Այն Ḫani անվան վրա ավելացրել են ասորեստանցիները: Ուրեմն, պետք է եզրակացնել, Խուրի երկրի բնիկների մյուս ինքնանվանումը Ḫani-ն է և ոչ՝ Ḫanigalbat-ը:

Ուրարտուի արքա Արգիշտի I-ը, ինչպես նշված է նրա տարեգրության մի բաժնում šurḫani՝ խուրի զինվորներ է հավաքում ու գնում արշավանքի դեպի Ուրմիա լճից անմիջապես հարավ գտնվող Մանա և ապա Բուշտու երկրները ու նվաճում դրանք[15]:

Այդ երկրների հզորության մասին են վկայում նույն թագավորի տարեգրության զանազան տարիների վերաբերող հաղորդումները: Մ.թ.ա. 779թ. Արգիշտի I-ը ձեռնարկում է արշավանք դեպի այժմյան Չլդր լճի ավազանի Իյանի (Իգանի) երկրի դեմ, ապա՝ Ուրմիա լճից հարավ գտնվող Մանաս ու նրա հարևան Բուշտու երկրների դեմ: Այդ ռազմական գործողությունների ընթացքում նշված երկրներից գերեվարում է 18.243 մարդ, 790 ձի, 100 ուղտ, 22.529 գլուխ խոշոր, 36.830 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Մեկ այլ արշավանքի ժամանակ Արգիշտին, նվաճելով Մանա և հարակից այլ երկրներ, գերի է վերցնում 1.397 մարդ, 8.021 խոշոր և 32.538 մանր եղջերավոր անասուն[17]:

Այս տվյալները ցույց են սաղիս, որ Մանան, ինչպես նաև Բուշտուն բավական հզոր վարչաքաղաքական միավորներ են եղել: Դրա մասին են վկայում այդ ժամանակի ուրարտական սեպագիր այլ աղբյուրներ[18]:

Ուստի, կարծում ենք, այդ երկրների նվաճման ժամանակ Արգիշտի I-ի հավաքած խուրի զինվորների քանակը պետք է լիներ 50 հազարից ոչ պակաս:

Հյուսիսային Միջագետքի և վերին Տիգրիսի ավազանի խուրիական երկրները, ինչպես գրում են Ասորեստանի թագավորները, հաճախակի ենթարկվում էին այդ տիրակալների ասպատակություններին: Ուստի խուրիները, հավանաբար, մեծ հույսեր են կապել ցեղակից ուրարտացիների՝ Վանա լճի արևելյան ավազանում ստեղծած պետության հետ Ասորեստանի արքաներից պաշտպանվելու և իրենց բնիկ տարածքները ազատագրելու նպատակով: Բացի այդ, հարստահարված խուրիները հեշտությամբ կզինվորագրվեին ուրարտական թագավորներին, որով տարեկան մոտ չորս ամիս ապահովվում էին սննդամթերքով, հանդերձանքով ու սպառազինությամբ, իսկ արշավանքների ժամանակ հարստանում էին ավարով՝ գերիներով, անասուններով:

Այս բոլորից ելնելով, կարծում ենք, որ ուրարտական բանակի ճնշող մասը լրացնում էին խուրիները: Դա էլ այն մեծ գործոնն էր, որով ստեղծվեց ու հզորացավ Ուրարտու պետությունը: Ուրարտական թագավորներ Իշպուինին (մ.թ.ա. 823-810թթ.) և Մենուան (մ.թ.ա. 810-786թթ.) հայկական գավառներն ու նահանգները նվաճելիս, ինչպես երևում է

նրանց արշավանքներին վերաբերող սեպագիր արձանագրություններից, դրանց միասնական դիմադրությանը չեն հանդիպել: Նրանք ուրարտական զորքի դեմ առանձին են կռվել և բնականաբար պարտվել: Ուրեմն Հայաստանն այդ ժամանակ միասնական հզոր զորք չի ունեցել:

Կարելի է ենթադրել, որ հայկական բանակը այլ սկզբունքներով էր կառուցված: Ինչպես ցույց են տալիս հայոց պատմության ուշ ժամանակներին վերաբերող փաստերը, բանակի մեծ մասը տարալուծված է եղել իշխանական տների մեջ: Ամեն մի գավառի կամ նահանգի իշխան իր կարողության սահմաններում պահում էր որոշ քանակությամբ զինուժ, որը հարկ եղած դեպքում պետք է միանար արքունի բանակին: Սակայն իշխանները ոչ միշտ էին միաբան և կենտրոնամետ: Իսկ ուրարտական բանակը կենտրոնացած էր թագավորի ձեռքում, որն էլ բարձրացնում էր զորքի մարտունակությունը:

Իսկ ինչ տեղի ունեցավ մ.թ.ա. 7-րդ դարում, որը խիստ բուլացրեց Վանի թագավորությանը և հանգեցրեց կործանման:

Նախ նշենք, որ, ինչպես գտնում են մասնագետները, Ուրարտուն սկսեց անկում ապրել Ասորեստանի տիրակալ Սարգոն II-ի մ.թ.ա. 714թ. նրա դեմ ձեռնարկած արշավանքից հետո: Վերջինս դաժան պարտության մատնեց Վանի թագավորության զորքին Ռուսա I-ի ժամանակ՝ ավերելով այդ պետության շատ բերդեր ու շտեմարաններ: Սակայն դրանից հետո էլ Ուրարտուն, թուլանալով, շարունակում էր գոյատևել համարյա նույն սահմաններում մինչև մ.թ.ա. 680թ.[19]:

Այդ թվականին, ինչպես փաստում են վաղ միջնադարի հայ պատմիչները, հայոց առաջնորդ Սկայորդին, որի նստավայրն էր Սասունը (ասսուր. Շուպրիա, ուրարտ. Արմե), ոտքի հանելով լեռնաշխարհի գավառներն ու նահանգները, երկրի մեծ մասը ազատագրում է օտարների գերիշխանությունից: Այդ ժամանակից, ինչպես պնդում են ուրարտագետները, Ուրարտուն մնում է ամփոփված Վանի նահանգի, Արարատյան դաշտի և դրանց միջև ընկած գավառների սահմաններում[20]:

Մովսես Խորենացու հաղորդումների համաձայն Սկայորդին ապաստան է տալիս մ.թ.ա. 681թ. դեկտեմբերին Ասորեստանի տիրակալ Սենեքերիմին սպանող նրա որդիներ Սանասարին և Բաղդասարին[21]:

Վերջիններիս կրտսեր եղբայր Ասարխադոնը, դառնալով թագավոր, ինչպես վկայում են նրան վերաբերող ասսուրական վավերագրերը, ճնշում է իր երկրում ծագած ապստամբությունը: Նա հաղթում է նաև այդ ժամանակ Ասորեստանի վրա Իրանի սարահարթի և Փոքր Ասիայի կողմերից հարձակվող ռազմատենչ կիմերներին ու սկյութներին, որից հետո արշավանք է ձեռնարկում դեպի Շուպրիա (ուշ՝ Սասուն) և նվաճում այն: Նա պահանջում է այդ երկրի արքա Նիք-Թեշուբից վերադարձնել իր հոր արյունը թավոդներին՝ մարդասպաններին: Ակնհայտ է, որ Սկայորդին Նիք-Թեշուբն է:

Նրա որդիներ Շերբի-Թեշուբը և Լիգի-Թեշուբ ներկայանում են Ասարխադոնին՝ խնդրելով նրանից ներում շնորհել իրենց հորը՝ մարդասպաններին ապաստան տալու համար[22]:

Այս երեք անձնանունների մեջ առկա է խուրիների ամպրոպի և որոտի Թեշուբ աստծու անունը: Իսկ niq-, serbi-, ligi- բաղադրիչները խուրիերեն բառեր են, որոնց իմաստները մեզ հայտնի չեն: Սակայն նկատի ունենալով ասսուրական թագավորների այն անունները, որոնց մեջ ստկւս են իրենց աստվածների հորջորջումները (օրինակ՝ Թուքուլտի-Նինուրտա «հզոր-(աստված) Նինուրտա»), պետք է կարծել, թե նշված բաղադրիչները ունեին «Թեշուբի սիրելի, հովանավորյալ, զորություն» կամ նման իմաստներ:

Նշված այդ երեք անձնանունները նկատի ունենալով՝ որոշ մասնագետներ եզրակացնում են, որ այդ ժամանակ Շուպրիայում իշխել է խուրիական դինաստիա: Սակայն դա համոզիչ չէ, քանի որ այդ դեպքում ուրարտական թագավորները կբարեկամանային այդ երկրի հետ և հաճախակի չէին ասպատակի, կողոպտի այն, գերեվարի նրա բնակչությանը, ինչպես դա տեղի է ունեցել:

Կարծում ենք, այդ տիտղոսները Սկայորդին և իր որդիները ստացել են, քանի որ կարողացել են ստեղծել մեծ բարեկամություն վերին Տիգրիսի ավազանի խուրիական երկրների հետ:

Հայոց առաջնորդ Սկայորդին, դաշնակցելով դրանց հետ, կարողացավ դադարեցնել խուրի ռազմիկների հոսքը Ուրարտու, որի պատճառով էլ վերջինս խիստ թուլացավ: Դրա շնորհիվ Սկսյորդին կարողացավ, ոտքի հանելով լեռնաշխարհի հայությանը, ազատագրել երկրի մեծ մասը Վանի թագավորությունից:

Ամփոփելով վերը շարադրված փաստերը՝ մենք գալիս ենք այն հետևության, որ Ուրարտուի մ.թ.ա. 859թ. պատմական ասպարեզ մտնելը և մ.թ.ա. 810 թվականից սկսած հզորանալը մեծ մասամբ պայմանավորված է եղել խուրի ռազմիկների ներհոսքով Վանի նահանգ, որոնք, կարելի է ասել, էժան ռազմական ուժ են դարձել Բիայնիլի պետության համար: Իսկ մ.թ.ա. 680թ. սկսած այդ թագավորության անկումը և ապա մ.թ.ա. 591թ. կործանվելը, կարծում ենք, նույնպես կապ ունի խուրի երկրների թարմ ուժերի դեպի Ուրարտու հոսքը դադարեցնելու հետ:

VALERY KHACHATRYAN

THE FORMATION, GROWTH AND DOWNFALL OF THE URARTIAN STATE

The Heartland of the Urartian State – Van Lake basin probably had a population of about a hundred thousand people. From the formation of the Urartian State a mass

of Hurrian population under the pressure of the Assyrian Empire migrated and found safc haven within the borders of the Urartian State. Many of them were called up for military service and took place in the campaigns of the Urartian Kings, thus, having sufficient contribution in the success of the Kingdom. From the beginning of the first quarter of the seventh century the migration of the Hurrian potential military force to Urartu for some reasons came to an end. This factor had a fatal role among the reasons of the downfall of the Kingdom.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Ն. Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. 15-7-րդ դդ, Երևան, 1998, էջ 118-121:
2. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, ժդ:
3. Նույն տեղը:
4. Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (= КУКН), Ереван, 2001, 241G.
5. И.М. Дьяконов, Некоторые данные о социальном устройстве Урарту, "Сборник памяти акад. А.И. Тюменева", М.-Л., 1963, с. 55-65.
6. Նույն տեղը:
7. Նույն տեղը:
8. Н.В. Арутюнян, КУКН, с. 413, 451.
9. R. Labat, Manuel d'epigraphie akkadienne, Paris, 1952, p. 157.
10. И.М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (=АВИИУ), "Вестник древней истории", Москва, 1951, № 2. Н.В. Арутюнян, "Биайнили", Ереван, 1970, с. 12.
11. Գ.Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1944, էջ 12:
12. Н.В. Арутюнян, КУКН, 241F, 28.
13. Н.В. Арутюнян, КУКН, 241A, 12.
14. G.F. Del Monte, J. Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, S. 79-80.
15. Н.В. Арутюнян, КУКН, 173, III, 49.
16. Н.В. Арутюнян, КУКН, 173, IV, 1-60.
17. Н.В. Арутюнян, КУКН, 173, V, 29-31.
18. Н.В. Арутюнян, Биайнили, 279-310.
19. Н.В. Арутюнян, նույն տեղում.
20. Վ.Ն. Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. XV-VIIդդ., էջ 133-137.
21. Մովսես Խորենացի, Հայոց պատմությունը, I, իգ:
22. И.М. Дьяконов, АВИИУ, № 65.